«tert.am» ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑԻ 12.05.2012Թ.
«ԳՈՀԱՐ ՎԵԶԻՐՅԱՆԸ ՊՆԴՈՒՄ Է, ՈՐ ՄՈՒՏՔԵՐԻ ԵՎ ԵԼՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՈՒՂԱՐԿԵԼ Է ԿԸՀ» ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Թիվ 12 ընտրատարածում գրանցված ՀՀ Ազգային Ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի նախկին թեկնածու Գոհար Վեզիրյանը 2012թ. մայիսի 12-ին www.tert.am լրատվական կայքին տրված հարցազրույցում նշել է, որ <<...ԿԸՀ ուղարկվել է նախընտրական հիմնադրամներ կատարված մուտքերի և ծախսերի վերաբերյալ հաշվետվություններ էլեկտրոնային տարբերակով>>:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <<Թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը ներկայացնում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ և 20-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար՝ սույն օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ>>:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 24.02.2012թ. N 36-Ա որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2012 թվականի մայիսի 6-ին կայանալիք հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի>> 40-րդ, 50-րդ և 91-րդ կետերի համաձայն՝ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն պետք է ներկայացնեին 2012 թվականի ապրիլի 17-ին, 27-ին և 2012 թվականի մայիսի 8-ին:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 16.02.2012թ. <<Նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների և հիմնադրամից կատարվող ծախսերի հաշվառման կարգը, հայտարարագրի ձևը սահմանելու մասին>> N 34-Ն որոշման 3-րդ կետի համաձայն՝ թեկնածուներն իրենց

նախընտրական հիմնադրամների վերաբերյալ հայտարարագրերը ներկայացնում են թղթային տարբերակով և էլեկտրոնային կրիչով՝ Adobe Acrobat (*.pdf) տարբերակով՝ մեկ ֆայլի մեջ:

Տեղեկացնում ենք, որ Գ. Վեզիրյանն առաջին հաշվետու ժամանակահատվածում նախընտրական հիմնադրամ չի ունեցել: Նախընտրական հիմնադրամ բացելուց հետո հայտարարագիրը ներկայացրել է ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետում: Երրորդ հայտարարագիրը Գ. Վեզիրյանը պետք է վերահկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացներ 2012 թվականի մայիսի 8-ին: Գ. Վեզիրյանի պնդումը, որ հայտարարագրի էլեկտրոնային տարբերակն ուղարկվել է, մեղմ ասած՝ իրականությանը չի համապատասխանում: Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն հայտարարագրի ոչ թղթային, ոչ էլ էլեկտրոնային տարբերակը չի ներկայացվել:

Ինչ վերաբերում է Վեզիրյանի այն կարծիքին, որ <<իրենք երևի ժամանակ կամ հավես չեն ունեցել ստուգելու իրենց էլեկտրոնային փոստը>>, ապա պետք է նշել, որ վերահկիչ-վերստուգիչ ծառայությունը պարբերաբար թեկնածուներից ստացել է հայտարարագրերի էլեկտրոնային տարբերակները, և ուղարկվելու դեպքում կստանար նաև նրանը: Ի դեպ, 2012թ. մայիսի 10-ին <<Ազատություն>> ռադիոկայանին տված հարցազրույցում Վեզիրյանը փաստել է, որ վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավարի հետ հեռախոսազրուցի ժամանակ նշել է, որ ինքը <<չի հասցնի զբաղվել այդ թղթարարությամբ>> և տեղեկանալով հայտարարագիր չներկայացնելու համար նախատեսված վարչական պատասխանատվության մասին՝ ընդունել է այդ հանգամանքը:

Անհեթեթ է նաև Գոհար Վեզիրյանի՝ հայտարարագրի թղթային տարբերակը առձեռն չներկայացնելու վերաբերյալ պատճառաբանությունը, քանի որ թեկնածուի առօրյա գործունեությունը որևէ կերպ չի կարող հարգելի պատճառ հանդիսանալ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված պարտականությունները չկատարելու համար:

ՀՀ ԿԸՀ վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն